

## Հանրության հետ կապերի և միջոցառումների կազմակերպման բաժին

Ազգային գրադարանում կազմակերպվող միջոցառումները հասարակության տարբեր շերտերի և գրադարանի ընթերցողների հետ յուրատեսակ կապի և համագործակցության միջոց են:

Գրադարանում տարեկան կազմակերպվում է ավելի քան 100 միջոցառում, որոնց մասին համապատասխան տեղեկատվություն է տրվում մամուլում, ռադիոյով և հեռուստատեսությամբ:

Գրականության ցուցահանդեսները՝ թեմատիկ և հորելյանական, գրքերի շնորհանդեսները, գրական-երաժշտական ցերեկույթները, դասախոսությունները, քննարկումները, մատենագիտական և տեղեկատվական բնույթի տեսությունները հասարակության հուզող խնդիրներին արձագանքելու, նրանց մշակութային և տեղեկատվական պահանջները բավարարելու, գրքային նորույթները հանրությանը և երիտասարդությանը ներկայացնելու ձևեր են:

Գրադարանում ավանդական դարձած միջոցառումներ՝

- Ազգային գրադարանի օր
- Ազգային գրադարանային շաբաթ
- Գրադարանավարի օր
- Գրադարանային երեկո

Գրադարանում կազմակերպվող միջոցառումները լայն ընդունելություն են գտել հասարակության շրջանում և արժանացել նրա դրվատանքին: Միջոցառումներին նվիրված գրադարանի «Տպավորությունների գրքում» մշակույթի, գիտության, գրականության և այլ բնագավառների նշանավոր անձինք թողել են իրենց գրառումները:

Հանրության հետ կապերի և միջոցառումների կազմակերպման բաժնին կից 2004 թվականից մինչև 2014 թվականի դեկտեմբեր ամիսը գործել է «Հոգևոր հայրենիք» ամսաթերթը: Ամսաթերթի արխիվը պահպանվում է Հայաստանի ազգային գրադարանի պաշտոնական կայքէջում՝ [Հոգևոր հայրենիք](#):

Բաժինը 2003-2014 թթ-ին կազմել է ՋԼՄ արձագանքներ տարեգիրքը, որտեղ ընդգրկվել են տարվա ընթացքում զանգվածային լրատվամիջոցներով տարածվող այն նյութերը, որոնք վերաբերում են Հայաստանի ազգային գրադարանին: Բաժնի կազմակերպած բոլոր միջոցառումները լուսաբանվել են «Facebook» սոցիալական ցանցում,

<https://www.facebook.com/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B..>

գրադարանի կայքէջում՝ [www.nla.am](http://www.nla.am) համապատասխան լուսանկարներով: